Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՔԱՆՀԻՆԴ ՏԱՐՈՒՄ (1943—1968 թթ.)

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը շուրջ մեկուկես հազարամյակի անցյալ ունի, սակայն այդ երկարաձիգ տարիների մեջ վերջին հիսուն տարին իր բովանդակությամբ ու նշանակությամբ առանձնահատուկ տեղ է գրավում։ Իրոք, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակն ու Հայաստանում սովետական կարգերի հաստատումը նոր դարաշրջան բացեցին ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական-տնտեսական, այլև գիտական և մշակութային կյանքում։ Տակավին 1921 թ. սկսվեցին կազմակերպվել Հայաստանի մշակույթի ու գիտության օջախներ[1], որտեղ, բնականաբար, առաջնակարգ կարևորություն էր տրվում նաև պատմության ուսումնասիրությանը։

1935 թ. կառավարության որոշմամբ ՍՍՀՄ ԳԱ Անդրկովկասի ֆիլիալը վերակազմվեց երեք ինքնուրույն ֆիլիալների՝ վրացական, ադրբեջանական և հայկական (Արմֆան)։ Արմֆանի կազմում ստեղծվում է պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որին 1938 թ. միացվում է զուգահեռ գործող ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտը։ Գիտական նոր հաստատությունը անվանվում է «Պատմության և հնագիտության ինստիտուտ»։ 1940 թ. վերջինիս միացվեց նաև ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի պատմության թանգարանը և այն վերանվանվեց «Պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտ»։

Հարկավ, հայ պատմագրության զարգացման գործում շրջադարձային նշանակություն ունեցավ Հայրենական մեծ պատերազմի ահեղ շրջանում՝ 1943 թ. նոյեմբերին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը։ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում պատմության և նյութական կուլտուրայի գործող հաստատության բազայի վրա, ստեղծվեց պատմության ինստիտուտը։

Շուտով այդ օջախի շուրջն են համախմբվում հայ պատմագրության նշանավոր գործիչները։ Հին սերնդի առանձին ներկայացուցիչների հետ աշխատանքի հիմնական ծանրությունն իրենց վրա են վերցնում սովետական կարգերի օրոք աճած մարքսիստ պատմաբանները։ Պատմության ինստիտուտը դառնում է հանրապետության պատմագիտական մտքի հիմնական ու առաջատար օջախը։ Եթե նախորդ տասնամյակներում պատմության բնագավառի հետազոտությունները կատարվում էին հայագիտության մյուս ճյուղերի հետ

---

1 1921 թ. փետրվարին հիմնվում է կուլտուր-պատմական կամ գիտական ինստիտուտը, 1922 թ.՝ պատմության թանգարանը, 1923 թ.՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմին կից կուսպատը, 1925 թ.՝ Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտը, 1933 թ.՝ Հայաստանի պատմության և կուլտուրայի ինստիտուտը, որը հետագայում (1935 թ.) վերափոխվեց ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի։

միասին և նկատելի չափով ընդհանուր բնույթ էին կրում, ապա ակադեմիայի կազմում պատմության ինստիտուտի ստեղծումը հնարավորություն էր ընձեռում ավելի խոր ու մասնագիտացված ուսումնասիրությունների ձեռնարկել, թե թեմատիկայի ընդգրկման և թե նրա լուսաբանման առումով։ Նորաստեղծ ինստիտուտի առջև ծառանում են բարդ ու պատասխանատու խնդիրներ։ Անհրաժեշտ էր ոչ միայն վերհանել պատմագրության տեսադաշտից դուրս մնացած մեր ժողովրդի անցյալի ու ներկայի բազմաթիվ հարցերը, այլ նաև մարքսիստական մեթոդոլոգիայով գիտական խոր ու լիարժեք մեկնություն տալ բուրժուական պատմագրության արծարծած պրոբլեմներին։ Այլ խոսքով, ինստիտուտը պարտավոր էր ուսումնասիրել մեր ժողովրդի սիստեմատիկ պատմությունը սկսած հնագույն շրջանից մինչև մեր օրերը, այսինքն՝ հետազոտել հայ ժողովրդի ապրած հասարակական-տնտեսական բոլոր ֆորմացիաները՝ իրենց հիմնական կողմերով։

Հարկ է նշել, որ պատմության ինստիտուտը իր ստեղծման օրից ակադեմիայի հայագիտական հիմնական կենտրոնն է եղել։ Ժամանակի ընթացքում, ինստիտուտի ընդարձակումն ու խորացումը և տարբեր թեքումներով մասնագետների պատրաստումը հասունացրել ու անհրաժեշտ են դարձրել գիտական նոր օջախների ստեղծումը։

Աստիճանաբար ինստիտուտից առանձնանում և ինքնուրույն հաստատություններ են դառնում ներկայիս հասարակական գիտությունների բաժանմունքի գրեթե բոլոր ինստիտուտներն ու սեկտորները[2]։

Պատմության ինստիտուտի ստեղծումն ու նրա սկզբնական շրջանի գործունեությունը անխզելիորեն կապվում է ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու՝ ինստիտուտի առաջին դիրեկտորի անվան հետ։ 1944 թ. նրան փոխարինում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։ 1947—1953 թթ. ինստիտուտի աշխատանքները գլխավորում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, 1953—1959 թթ. ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, 1959—1963 թթ. պրոֆեսոր Ա. Բ. Հարությունյանը, իսկ 1963 թվականից՝ պրոֆեսոր Ռ. Ա. Գալոյանը։

Ինստիտուտը իր բարձր կոչման պատասխանատվությամբ ձեռնամուխ է եղել մեր ժողովրդի պատմության ուսումնասիրությանը և անցած քառորդ դարում անուրանալի հաջողությունների հասել։

Արդ, ինչ հիմնական ուղղություններով է ընթացել ինստիտուտի աշխատանքները և որոնք են նրա գիտական գործունեության հիմնական արդյունքները։

Դրանցից առաջինը հին Հայաստանի (VI դ. մ. թ. ա.—V դ. մ. թ.) պատմությունն է։ Նրա ուսումնասիրությունը, անցած քսանհինգ տարիների ընթացքում, կենտրոնացած է եղել գերազանցապես երեք հիմնական պրոբլեմների շուրջը։ Այդ պրոբլեմներից հասարակական-քաղաքական իր այժմեական նշանակությամբ առավել կարևորը, դա հայ ժողովրդի ծագումն է։ Մինչև

---

2 Այսպես, 1947 թ. ինստիտուտի կազմից առանձնացվում են փիլիսոփայության և արվեստի պատմության սեկտորները։ Վերջինս, շուտով, վերակազմվում է և դառնում առանձին ինստիտուտ։ 1957 թ. ինստիտուտից հանվում է Մերձավոր արևելքի խումբը ու ստեղծվում է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորը։ 1959 թ. ինստիտուտից առանձնացվում են հնագիտության սեկտորը և ազգագրության խումբը ու նրանց բազայի վրա հիմնվում է հնագիտության և ազգագրության ինստիտուտը։

1940-ական թվականները պատմագիտական միտքը ակտիվորեն զբաղվել և որոշ հաջողություններ է հասել այդ հարցի մշակման ասպարեզում։

Ս. Երեմյանը հենվելով այս բնագավառում ձեռք բերված նվաճումների վրա, իր ուսումնասիրություններում հայ ժողովրդի կազմավորման գործում Հայասայից հետո երկրորդ դերը վերագրում է Արմե-Շուպրիա ցեղային միությանը։

Բայց հարկ է նշել, որ չնայած կատարած արդասավոր աշխատանքներին, հայ ժողովրդի ծագման կնճռոտ պրոբլեմը, նրա հարուցած բարդ հարցերի ամբողջությունը վերջնականապես լուծված չի կարելի համարել և առաջիկայում էլ անհրաժեշտ է պատմաբանների, լեզվաբանների, հնագետների միացյալ ուժերով գիտականորեն մշակել այն։

Առավել շոշափելի արդյունքներ կան հին Հայաստանի հասարակարգի հետազոտման ասպարեզում։ Հենվելով նախասովետական (Ն. Ադոնց) և 1920—1930-ական թվականների հայ պատմագիտության (Հ. Մանանդյան, Խ. Սամվելյան) հաջողությունների վրա, Ս. Երեմյանը նոր տեսություն մշակեց։ Նա ուսումնասիրելով հին Հայաստանի մասնավոր սեփականատիրական տնտեսությունները, գյուղական համայնքը, պետական կառուցվածքը և տալով այդ հասարակարգի պարբերացումը, հանգեց այն հետևության, որ նախաֆեոդալական Հայաստանը ստրկատիրական բնույթ է ունեցել։ Հետագայում հին Հայաստանի ու հելլենիստական արևելքի քաղաքների, հողատիրության և այլ բնույթի փաստերի հիման վրա երիտասարդ մասնագետների ուժերով (Ռ. Սարգսյան, Ա. Փերիխանյան և ուրիշներ) ավելի հիմնավորվեց այս նոր տեսակետը, ընդգծվեց Հայաստանի ստրկատիրական հասարակության առանձնահատկությունները։

Հին Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրության բնագավառում ավագ սերնդի ներկայացուցիչների հետ մեկտեղ ու նրանց թողած ժառանգության վրա հենվելով, երիտասարդ մասնագետները մարքսիստական տեսությամբ նոր մեկնաբանություններ տվեցին հայ ժողովրդի հին շրջանի պատմության մութ մնացած ժամանակահատվածների, ինչպես, օրինակ Երվանդունիների շրջանի (VI—III դ. մ. թ. ա.), մ. թ. III դ. պատմության շատ դրվագների։ Միաժամանակ լուսաբանվեցին հին հայ հասարակության մեջ կատարվող սոցիալ-քաղաքական պայքարի հարցերը։

Որոշ աշխատանք է կատարվել հին Հայաստանի հոգևոր մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ։ 1962 թ. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի առիթով ավելի խոր ու համակողմանիորեն բացահայտվեցին V դ. սկզբներին կատարված հայ գրերի դյուտի կուլտուր-պատմական նշանակությունը, նրա դերը հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր ճակատագրում։

Հայ ժողովրդի պատմության մեջ հասարակական-տնտեսական ֆորմացիաներից, ժամանակագրական առումով, ամենից ավելի տևականը ֆեոդալական հասարակարգն է եղել (V—XVIII դդ.)։ Բնականաբար, միջնադարյան Հայաստանի պատմությունն էլ ուսումնասիրության ամենահիմնական օբյեկտ է հանդիսացել։ Այս բնագավառում հայ պատմագրությունը, ինչպես անցյալում, այնպես էլ սովետական իշխանության առաջին տասնամյակներին՝ մինչև 1930-ական թվականների վերջը, խոշոր ավանդ է մուծել։ Այսուհանդերձ, գիտական արդյունքների տեսակետից խիստ շոշափելի են վերջին քսանհինգ տարում կատարված աշխատանքները։ Ավելին, կարելի է ասել, որ ֆեոդալա-

կան հասարակարգի ծագման ու պարբերացման, նրա սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն խնդիրների մարքսիստական մշակումը հիմնականում սկսվել է 40-ական թվականներից։

Նախասովետական շրջանում գերիշխում էր այն տեսակետը, որ Հայաստանում ֆեոդալիզմը ծագել է տոհմատիրական կարգերի քայքայման հիմքի վրա։ Այս տեսության հիմնադիր, ականավոր պատմաբան Ն. Ադոնցը ֆեոդալիզմը դիտում էր ոչ որպես արտադրության որոշակի եղանակ, այլ որպես իրավա-քաղաքական կազմակերպության մի ձև։ Հետագայում ակադ. Հ. Մանանդյանն իր աշխատություններում հանգամանորեն քննարկեց Հայաստանի ֆեոդալական հասարակարգի առանձնահատկությունները, նրան հատուկ ինստիտուտները, սակայն նա ևս լռվանդակ հին և միջնադարյան Հայաստանը դիտում էր որպես ավատական հասարակարգ։ Ս. Երեմյանը զարգացրեց միանգամայն նոր տեսակետ. նա ֆեոդալիզմի առաջացումը կապեց II—III դդ. Հայաստանում ստրկատիրական կարգերի քայքայման և նրա ճգնաժամի հետ։

Վերջին քառորդ դարում ինստիտուտը զգալի հաջողություններ հասավ ֆեոդալական հասարակարգի զարգացման տարբեր փուլերը բնութագրելու և այն բնորոշող էական պրոբլեմները ուսումնասիրելու ուղղությամբ։ Միջնադարյան պատմության մասնագետների հետազոտությունները պարզորոշ դարձրին այն իրողությունը, որ IX դարում վաղ ֆեոդալիզմից անցում է կատարվում դեպի այդ ֆորմացիայի ծաղկումը, որը հարատևում է մինչև XIV դարը։

1950-ական թվականներից սկսած ուսումնասիրության առաջնահերթ նյութ դարձավ հայ գյուղացիության ճորտացման՝ սովետահայ պատմագրության մեջ վաղուց սուր բանավեճեր հարուցող հարցը։ Աստիճանաբար ավելի ու ավելի ճանաչվարհ հարթեց ու գերիշխող դարձավ այն տեսակետը, ըստ որի զարգացած ֆեոդալիզմի շրջանում հայ գյուղացիությունը մասսայաբար ճորտացվել է, սակայն ֆեոդալական հասարակարգին բնորոշ այս երևույթը Հայաստանում չի հասել դասական ճորտատիրության մակարդակին։

Ֆեոդալիզմի դարաշրջանի բաղաքական պատմության ուսումնասիրության գործում մեծ երախտիք ունեն Լեոն (Ա. Բարախանյանը) և Հ. Մանանդյանը։ Լեոն տվել է միջնադարյան Հայաստանի պատմության գունեղ շարադրանքը։ Սակայն տակավին 20-ական թվականներին ավարտված նրա աշխատությունները պատմության ինստիտուտը ընթերցող հասարակայնության սեփականությունը կարողացավ դարձնել միայն 1946—1947 թթ.։ Ինստիտուտը այդ տարիներին, համապատասխան առաջաբաններով ու ծանոթագրություններով, հրատարակեց Լեոյի Հայոց պատմության 2-րդ և 3-րդ հատորները։

Հին և միջնադարյան Հայաստանի բաղաքական պատմությունը հանգամանորեն լուսաբանել է Հ. Մանանդյանը՝ իր հետազոտության շրջանում հրատարակած հայ ժողովրդի քննական պատմության եռհատորյակում։ Գնահատելի է այն, որ Հ. Մանանդյանը իր ուշադրությունը կենտրոնացրել է առավել թերի լուսաբանված ժամանակաշրջանների վրա և հաճախ միանգամայն նոր մեկնություն տվել շատ հարցերի։ Նա իրեն պրաղեցնող ժամանակի բաղաքական պատմության երևույթները քննարկում է Հայաստանի և հարևան երկրների պատմության ընդհանուր ֆոնի վրա, ուստի և նրա աշխատությունները մեծ արժեք են ներկայացնում նաև Առաջավոր Ասիայի երկրների և հատկապես Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։

1940—1950-ական թթ. բուրժուական պատմագրության ազդեցությունը հաղթահարած միջին սերնդի մասնագետների ուժերով մեծ աշխատանք է ծավալվել ֆեոդալական Հայաստանի պատմության առանձին հարցերը հետազոտելու ուղղությամբ։ Հանգամանորեն լուսաբանվել են զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում քաղաքների ծագման, նրանց ֆեոդալական բնույթի, արհեստների, ապրանքային արտադրության, քաղաքների ներքին կյանքի ու նրանց անկման հետ կապված խնդիրները (Բ. Առաքելյան)։

Ուսումնասիրվել է հայ ժողովրդի հատվածներից մեկի՝ Կիլիկիայի հայկական թագավորության ամբողջական պատմությունը (Գ. Միքայելյան), մեր ժողովրդի միջնադարյան շրջանի ամենից ավելի վատ ուսումնասիրված փուլի՝ XV—XVI դդ. պատմությունը (Լ. Խաչիկյան)։ Զգալի աշխատանք է կատարվել գյուղացիական պատմությունը, միջնադարյան սոցիալական շարժումներն ու ապստամբությունները, հայ-բյուզանդական հարաբերությունները, արևմտահայ հատվածի ուշ միջնադարի սոցիալ-տնտեսական կյանքը և պատմագիտական այլ հարցեր վերհանելու ուղղությամբ։

Վերոհիշյալ հետազոտությունները և երիտասարդ մասնագետների ուժերով կատարված բազմաթիվ ուսումնասիրություններ հիմնականում եկան ամրապնդելու և ավելի հիմնավորելու ինստիտուտի մշակած ու Ս. Երեմյանի կողմից ձևակերպված Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության գիտական պարբերացումը։ Ըստ նրա, Հայաստանում վաղ ֆեոդալիզմի դարաշրջանն ընդգրկում է IV—VIII դդ., զարգացած ֆեոդալիզմի շրջանը՝ IX—XIII դդ., ֆեոդալիզմի վայրէջքի ու անկման դարաշրջանը՝ XIV—XVIII դարերը։ Այս պարբերացումը մասնակի փոփոխությունների ենթարկվելով հետագայում հիմք հանդիսացավ դասագրքերի ու ձեռնարկների համար։

Ինստիտուտի ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովրդի նոր շրջանի պատմության կարևորագույն պրոբլեմների մշակումը։

Հայաստանի XVIII—XIX դարերի պատմության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի Թուրքիայի և Պարսկաստանի տիրության դեմ տակավին միջնադարում սկսված ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը։ Առանցքային նշանակություն ունեցող այս հարցի գիտական խոր ու հանգամանալից ուսումնասիրությունը, փաստորեն, սկսվում է 1940-ական թվականներից։ Ա. Գ. Հովհաննիսյանը հետազոտել և իր աշխատություններում լուսաբանել է հայ ազատագրական մտքի պատմությունն ու ազատագրական շարժումները միջնադարում։ Պատմական պայմանների բերումով Հայաստանի ազատագրումը միշտ էլ կապվել է դրսի օգնության հետ։ Ելնելով դրանից Ա. Հովհաննիսյանը ցույց է տվել, որ եթե ուշ միջնադարում, մինչև XVII դարի վերջերը Արևմտյան Եվրոպայի երկրների օգնության հետ էր կապվում Հայաստանի ազատագրման խնդիրը, ապա հետագայում անվերադարձ շրջադարձ է կատարվում այդ քաղաքականության մեջ։ Պետրոս I-ինի օրոք, ռուսական ինքնակալության հզորացման շրջանում ձևավորվում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու իրական հիմքեր ունեցող քաղաքական օրիենտացիան։ Վ. Ոսկանյանը կովան դարձնելով Մոսկովյան պետության և հայերի առևտրական և կուլտուրական կապերը հավաստող տվյալները, հայ ազատագրական շարժման ռուսական օրիենտացիայի ձևավորումը դիտում է ավելի վաղ շրջանում՝ XVII դարի երկրորդ կեսում։

XVIII դարի երկրորդ կեսի հայ-ռուսական հարաբերությունները և ազատագրական շարժումները հանգամանորեն քննարկվել են Ա. Ռ. Հովհաննիսյանի մենագրություններում։ Նրանցում ցույց է տրվել Ռուսաստանի միջոցով Հայաստանը ազատագրելու պատմական անհրաժեշտությունը, ինչպես նաև Ռուսաստանի օգնությամբ ու նրա գերիշխանության ներքո հայկական պետականությունը վերականգնելու հայ ազատագրական շարժման ղեկավարների ձգտումները։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը Հայաստանի նոր պատմության հանգուցային հարցերից մեկն է, որը և եղել է ինստիտուտի ուշադրության կենտրոնում։ Արևելյան Հայաստանի պատմական զարգացման պրոցեսի համակողմանի հետազոտման հիման վրա, ի տարբերություն 1920—30-ական թթ. գերիշխող տեսակետների, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը և ուրիշներ, վեր հանեցին պատմական այդ ակտի առաջադիմական նշանակությունը։ Շնորհիվ դրա արևելահայությունը ոչ միայն ազատվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, այլև համեմատաբար լավ պայմաններ ստեղծվեցին նրա ազգային ձևավորման, տնտեսական-քաղաքական ու կուլտուրական զարգացման համար։ Եթե արևելահայությունը իր բախտը կապելով ռուս ժողովրդի հետ, հուսալի հեռանկարներ ստացավ, ապա հայ ժողովրդի արևմտյան հատվածը շարունակում էր կրել թուրքական դեսպոտական լուծը, որի դեմ, նա, բնականաբար, ընդվզում էր։

XIX դարի երկրորդ կեսում Արևմտյան Հայաստանում մասսայական, համաժողովրդական բնույթ են ստանում ազգային-ազատագրական շարժումները։ Այս կարևոր պրոբլեմի ուսումնասիրության ուղղությամբ բավական շոշափելի գործ է կատարվել։ Մ. Ներսիսյանի և ուրիշների մենագրություններում բացահայտվել է թուրքական բռնատիրության դեմ ուղղված ազատագրական շարժումների առաջադիմական նշանակությունը, նրա ազգային ու սոցիալական բնույթը։

Գիտականորեն հիմնավորվել է հայ իրականության մեջ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի առկայությունը։ Ա. Գ. Հովհաննիսյանը լուսաբանել է Գերցենի և Օգարյովի գաղափարական ղինակից, դեմոկրատ Մ. Նալբանդյանի հեղափոխական գործունեությունը, նրա ժամանակաշրջանի հայ հասարակական հոսանքների ու ազատագրական շարժումների պատմությունը։

Լուրջ աշխատանք է կատարվել XIX դարի վերջին քառորդի հասարակական-քաղաքական մտքի և ազատագրական շարժումների ուղղությամբ։

Հայաստանի XIX դարի սոցիալ-տնտեսական զարգացման ուսումնասիրությունը հիմնականում սկսվել է 1940-ական թվականներից, ավելի ճիշտ ետպատերազմյան շրջանում։ Այս բնագավառում կատարվող հետազոտությունների մեջ առաջնահերթ կարևորություն ունեն ագրարային հարաբերությունների և գյուղացիության պատմության հարցերի լուսաբանումը։ Վ. Ռշտունու և ինստիտուտի երիտասարդ մասնագետների ուժերով (Ա. Համբարյան և ուրիշներ) ուսումնասիրվել է 1870 թ. գյուղացիական ռեֆորմը, նրա առանձնահատկությունները և նշանակությունը կապիտալիստական հարաբերությունների զարգացման տեսակետից։ Ցույց է տրվել հայկական գյուղում կապիտալիստական հարաբերությունների առաջացման ու զարգացման կոնկրետ պայմանները ու ընթացքը, նրան ուղեկցող գյուղացիական հուզումները ու շարժումները։ Վերջին տասնամյակում որոշակի առաջընթաց է կատարվել Արևմտյան

մրտյան Հայաստանի ազրարային հարաբերությունների և առհասարակ տնտեսական զարգացման, առաջներում գրեթե անտեսված, հարցերը հետազոտման նյութ դարձնելու ուղղությամբ։ Եվ կան առաջին հաջողությունները, հրապարակ են եկել ուսումնասիրություններ, որոնք նպաստում են Արևմտյան Հայաստանում կատարված սոցիալ-քաղաքական երևույթները հասկանալուն։

XIX դարի վերջերը և XX դարի առաջին երկու տասնամյակը հայ ժողովրդի համար հասարակական-քաղաքական բուռն իրադարձություններով հարուստ մի շրջան էր։ Պատմության ինստիտուտը շոշափելի արդյունքների է հասել նաև այդ ժամանակաշրջանի գիտական-քաղաքական ակտուալ նշանակություն ունեցող պրոբլեմների հետազոտման գործում, չնայած այն չի կարող բավարար համարվել ու լիովին գոհացնել պատմագիտության ներկա պահանջները։

Հանգամանորեն ուսումնասիրվել է անցյալ դարի վերջերին հայ իրականության մեջ թափանցող նոր գաղափարախոսության՝ մարքսիզմի տարածումը, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը (Խ. Բարսեղյան)։ Վերջին տարիներին լուրջ աշխատանքներ են կատարվել մարքսիզմի առաջացման գաղափարական ակունքները բացահայտելու ուղղությամբ։ Գիտականորեն հիմնավորվում է այն տեսակետը, որ ինչպես ռուսական իրականության մեջ, այնպես էլ Հայաստանում նարոդնիկությունը և հատկապես նրա ձախ թևն է հանդիսացել հեղափոխական դեմոկրատիայի գաղափարական ժառանգորդը և սոցիալ-դեմոկրատիայի նախորդը։

Նոր շրջանի առանցքային հարցերից է բանվոր դասակարգի ձևավորման և հեղափոխական շարժումների պատմությունը։ Մինչև 1950-ական թվականների կեսերը այս բնագավառում կատարվող աշխատանքները գոհացուցիչ չէին և պատահական բնույթ էին կրում։ Ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության 50-ամյակի առիթով հրապարակ եկան առանձին մենագրություններ (Ս. Պ. Աղայան և ուրիշներ), հոդվածների ժողովածուներ ու բրոշյուրներ, որոնցում, ըստ ամենայնի, վեր հանվեցին 1903—1907 թթ. Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումները։ Հեղափոխության տարիներին երկրի սոցիալ-տնտեսական դրության, մասնավորապես բանվորական շարժումների ու գործադուլների ուսումնասիրությունը մեծապես նպաստեց և ուրվագծեց Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորման ու նրա գոյության առաջին էտապը։ Սակայն մինչև այժմ էլ չկա և ընթերցող հասարակայնությունը սպասում է նախասովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության վերաբերյալ ամբողջական աշխատության հրապարակ գալուն։ Չեն լուսաբանվել նաև XX դարի սկզբներին ծավալված ազգային-ազատագրական շարժումները, այդ հարցում հայկական բուրժուազիայի քաղաքական ու գաղափարական դիրքորոշումը։

Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մեծ տրագեդիա ապրեց հայ ժողովուրդը։ Որոշ աշխատանքներ են կատարվել նաև այս թեմատիկան բարձրացնելու նպատակով։ Լուսաբանվել է Գերմանիայի և անգլո-ֆրանսիական իմպերիալիստների դիրքորոշումը արևմտահայության գենոցիդի հանդեպ, Թուրքիայի դավթողական քաղաքականությունը Անդրկովկասում։

Հայ ժողովրդի պատմության ամենակարևոր փուլի՝ ետոկտեմբերյան ժամանակաշրջանի ուսումնասիրությունը, փաստորեն, սկսվել է գիտություն-

ների ակադեմիայի հիմնադրման շրջանից։ Մինչ այդ միայն սովետական կարգերի հաստատման ու սոցիալիստական շինարարության առաջին տարիների հարցերն էին մասնակի հետազոտման առարկա դարձել, իսկ Սովետական Հայաստանի ամբողջական պատմությունը տակավին կարոտ էր մարքսիստական ընդհանրացման։

Հարկ է նշել, որ նորագույն ժամանակաշրջանի, այդ թվում Սովետական Հայաստանի պատմության հետազոտումը առավել դժվարություններ է հարուցում, քանի որ այս շրջանի պատմությունը չունի ուսումնասիրության փորձ։ Այստեղ պահանջվում է գիտականորեն լուսաբանել ժամանակակից հարցերը, որի ականատեսն ենք մենք և որի սկզբնաղբյուրները՝ փաստաթղթերն ու նյութերը մեծ մասամբ ցրված են դեռևս չմշակված արխիվներում ու պարբերական մամուլում։ Առանց երկբայելու կարելի է ասել, որ պատմության ինստիտուտի անցած քառորդ դարում ունեցած ամենամեծ նվաճումը դա Սովետական Հայաստանի պատմության հարցերի գիտական մշակումն է։

Ինչպես և պետք էր սպասել, ինստիտուտի ուշադրության կենտրոնում ամենից առաջ եղել է հայ ժողովրդի բաղմադարյան պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձությունը՝ սովետական կարգերի հաստատման պրոբլեմը։ Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը ապրել են պայքարի ծանր ու լարված տարիներ։ Հայտնի է, որ 1917 թ. աշնան և 1918 թ. սկզբի հեղափոխական շարժումները չհասցրին իշխանության գրավմանը։ Դրան հաջորդող թուրքական արշավանքն Անդրկովկաս, միջազգային իմպերիալիզմի առավել ակտիվ միջամտությունը երկրամասի ներքին գործերին, բուրժուա-նացիոնալիստական հանրապետությունների ստեղծումը արմատականորեն փոխեցին իրավիճակը և դրանով իսկ նոր խնդիրներ դրեցին սովետների իշխանության համար պայքարող ուժերի առջև։ Այդ շրջանը հետազոտող հեղինակների աշխատություններում (Ծ. Աղայան, Գ. Գալոյան, Հ. Էլչիբեկյան, Հ. Կարապետյան և ուրիշներ) փաստական հարուստ նյութերի հիման վրա հանգամանորեն լուսաբանվել է 1917—1920 թթ. պատմությունը, սովետական իշխանության համար մղվող պայքարի հիմնական էտապները։ Այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են դրությունը Հայաստանում փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո, ժամանակավոր կառավարության անդրկովկասյան օրգանների գործունեությունը, հակահեղափոխական ուժերի կոնսոլիդացիան, Անդրկովկասի կոմիսարիատի և Սեյմի ստեղծումը, աշխատավորական զանգվածների պայքարը դաշնակցական տիրապետության դեմ, Մայիսյան հերոսական ապստամբությունը, սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։ Ցույց է տրվել 1921 թ. փետրվարի հակահեղափոխական խռովությունը, նրա ջախջախումը և սովետական իշխանության ամրապնդումը Հայաստանում (Ա. Հակոբյան)։ Լուսաբանվել է Վ. Ի. Լենինի ղեկավար դերը և Սովետական Ռուսաստանի օգնությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարում (Գ. Ղարիբջանյան, Ա. Մնացականյան)։ Ձնայած կատարված ակնառու աշխատանքներին, առաջիկայում ևս ինստիտուտը շարունակելու է Հայաստանում սովետական կարգերի հաստատման և քաղաքացիական պատերազմի պատմության դեռևս ոչ բավարար խորությամբ հետազոտված առանձին հարցերի մշակումը։

Սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանը անցել է երկրի բայքայված տնտեսությունը վերականգնելու և սոցիալիստական շինարարու-

թյան մեծ և դժվարին ուղի։ Այս շրջանի մասնագետների աշխատություններում հարուստ նյութերի հիման վրա շարադրվել է սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրները, նրա ընթացքը, առաջին անգամ գիտականորեն ընդհանրացվել է Սովետական Հայաստանի պատմության այդ փուլը։ Լուսաբանվել են մասնավորապես ժողովրդական տնտեսության վերականգնման, արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, սոցիալիզմի կառուցումն ավարտելու և կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցմանն անցնելու խնդիրները։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովուրդը ցուցաբերեց իր անսահման նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքի հանդեպ, իսկ նրա քաջարի զավակները հերոսության ու սխրագործության փայլուն էջեր գրեցին պատերազմի տարեգրության մեջ։ 1941—1945 թթ. պատերազմին հայ ժողովրդի մասնակցության վեր հանումը ինստիտուտի առաջնահերթ ու պատվավոր խնդիրներից մեկն է եղել և է։ Գիտակցելով դրա կարևորությունը, տակավին պատերազմի նոուն շրջանում ՀՍՍՀ ԳԱ նախագահության նախաձեռնությամբ ինստիտուտի կազմում ստեղծվեց Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետ (վարիչ՝ Ե. Խալեյան)։ Կաբինետի առջև խնդիր դրվեց հավաքել ու կորստյան վտանգից փրկել պատերազմական տարիների փաստաթղթերն ու նյութերը և ապա գիտականորեն ընդհանրացնել այն։ Համեմատաբար կարճ ժամանակում ստեղծվեցին հայկական ազգային զորամասերի, Սովետական Միության հայ հերոսների, գեներալների, հրամանատարական կազմի ու շարքայինների, հայ պարտիզանների, ինչպես նաև պատերազմի տարիներին թիկունքում առավել աչքի ընկած կազմակերպությունների ու առանձին գործիչներին նվիրված փաստաթղթերի ու իլյուստրացիոն նյութերի հատուկ ֆոնդեր։ Հիրավի, հանրապետության մեջ հայրենական պատերազմի պատմության նյութերի այժմյան ամենահարուստ հավաքածուն՝ դա պատմության ինստիտուտի մեծարժեք արխիվն է։ Կուտակված նյութերի հիման վրա անցած քսանհինգամյակի ընթացքում գրվել են մենագրություններ (Ա. Մնացականյան և ուրիշներ), կոլեկտիվ աշխատություններ ու բազմաթիվ բրոշյուրներ, որոնք բոլոր ամենայնի պատկերացում են տալիս Հայրենական պատերազմին հայ ժողովրդի մասնակցության մասին։

Ինստիտուտը վերջին տասնամյակում ակտիվ գործունեություն է ծավալել հանրապետության ետպատերազմյան և կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանի պատմության հարցերի լուսաբանման ուղղությամբ։ Ուսումնասիրվել և գիտականորեն ընդհանրացվել են չորրորդ (1946—1950), հինգերորդ (1951—1955) հնգամյակների և յոթնամյակի (1959—1965) Հայաստանի բազմաբնակչական պատմության, ժողովրդական տնտեսության բուռն զարգացման, գիտության ու տեխնիկայի ասպարեզում ձեռք բերված իրոք խոշոր նվաճումները։ Առաջիկայում, բնականաբար, այս բնագավառում տարվող աշխատանքները ավելի են ընդարձակվելու և խորանալու։

Նորագույն ժամանակաշրջանի առանցքային հարցերից է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության պատմությունը։ Հայտնի է, որ նախասովետական Հայաստանը եղել է ագրարային երկիր, արդյունաբերական տեսակետից հետամնաց ցարական Ռուսաստանի ծայրամասերից մեկը։ Այդ պատճառով էլ սովետական իշխանության տարիներին է հիմնականում ձևավորվում Հայաստանի բանվոր դասակարգը։ Սովետական Հա-

յաստանի արդյունաբերության ու բանվոր դասակարգի պատմության այս յուրահատկությունը բացահայտվել է ինստիտուտի գիտական հետազոտություններում։ Հանգամանորեն վեր է հանվել բանվոր դասակարգի դերը սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում՝ պատերազմի տարիներին ու ետպատերազմյան շրջանում։

Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը շարադրվել է հայկական գյուղի սոցիալիստական վերակառուցման պրոցեսը լուսաբանելիս։ Ուսումնասիրվել են ոչ միայն կոլեկտիվացման տարիների ու նախապատերազմյան շրջանի, այլև վերջին քսանամյակի հանրապետության գյուղի աշխատավորության պատմության հարցերը։ Որոշ աշխատանք է կատարվել սոցիալիստական շինարարության մեջ բանվոր դասակարգի և գյուղացիության համագործակցության, նրանց դաշինքը ըստ ամենայնի ցույց տալու ուղղությամբ։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության պատմության առանձին էտապների ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում և ինստիտուտը պատրաստվում է առաջիկայում հրատարակել նրանց ընդհանրացնող պատմությունը անցած կեսդարյան շրջանում։

Բավական լուրջ քայլեր են կատարվել Հայաստանի սոցիալիստական քաղաքների ու գործարանների պատմությունը ստեղծելու ասպարեզում, որը մեծապես օգնում է բանվոր դասակարգի պատմությունը ստեղծելու գործին։

Լուսաբանվել են նաև սովետների, կուլտուրական շինարարության, սովետահայ մտավորականության պատմությունը և հարակից այլ հարցեր։

Մինչև վերջին ժամանակներն անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում մեր ժողովրդի անբաժանելի մասը կազմող, գաղթավայրերի պատմության վրա։ Հայ ժողովուրդը իր պատմական ճակատագրի բերումով հարկադրված է եղել հոծ զանգվածներով թողնել հայրենիքը և բնակություն հաստատել տարբեր երկրներում։ Այս եղանակով ստեղծված աշխարհասփյուռ գաղութները կապված են մայր հայրենիքի հետ։ Առանց այդ գաղթավայրերի պատմության ուսումնասիրման անհնար է հայ ժողովրդի գիտական, ամբողջական պատմության ստեղծումը, քանի որ դարեր շարունակ երկրից դուրս են գտնվել ոչ միայն հայության հսկայական հատվածները, այլև հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնները, մշակույթի հիմնական օջախները։ Չնայած այս անառարկելի ճշմարտությանը, գաղթավայրերի ուսումնասիրությունը անուշադրության էր մատնված, համենայն դեպս այդ ուղղությամբ որևէ կազմակերպված աշխատանք չէր տարվում։

ՍՄԿԿ XX համագումարի պատմական որոշումներից հետո, ինչպես հայտնի է, էական տեղաշարժեր կատարվեցին գաղափարական կյանքում առհասարակ, պատմագրության մեջ՝ մասնավորապես։ Այդ որոշումների բարերար ազդեցությամբ ուժեղացավ հետաքրքրությունը նաև սփյուռքահայության և հայ գաղութների նկատմամբ։ Շնորհիվ դրա, գործնական քայլեր կատարվեցին՝ 1959 թ. պատմության ինստիտուտում կազմակերպվեց հայ գաղթավայրերով և պատմական կապերով զբաղվող հատուկ բաժին։

Անցած շուրջ մեկ տասնամյակի ընթացքում բաժնի ուշադրության կենտրոնում է եղել հիմնականում ռուսահայ գաղութների (Ղրիմ, Նոր Նախիջևան, Աստրախան, Գրիգորիոպոլ) պատմությունը։ Շոշափելի աշխատանք է կա-

տարվել նաև Ուկրաինայի հայ գաղթավայրերի պատմության լուսաբանման ուղղությամբ։

Ուսումնասիրվում են Բուլղարիայի, Լեհաստանի, Հունաստանի, Ֆրանսիայի և այլ երկրների հայ գաղութների անցյալն ու ներկան։

Աշխատանքներ են ծավալվում սփյուռքահայ կյանքի հարցերը մշակելու ուղղությամբ։ Առայժմ լուսաբանվել է արտասահմանյան հայկական կուսակցությունների գործունեությունը (Լ. Խուրշուդյան), ընդհանուր ձևով ներկայացվել է (Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի 7-րդ հատոր) Սովետական Հայաստանի և սփյուռքահայության հարաբերությունները 1920—1940 թթ. և նույն ժամանակաշրջանի սփյուռքահայ մշակույթը։

Վերջին տարիներին ինստիտուտի համապատասխան բաժինը զբաղվում է հայ պարբերական մամուլի ուսումնասիրությամբ, որը կարող է նպաստել հայ ժողովրդի պատմության, այդ թվում գաղթավայրերի և սփյուռքահայ կյանքի հարցերի լուսաբանմանը։

Տարբեր առիթներով, մասնակի, հաճախ խիստ համառոտ ու սխեմատիկ հետազոտություններ են կատարվել պատմագրության բնագավառում։ Ներկայումս կատարված աշխատանքները և համապատասխան կադրերի առկայությունը հնարավորություն են տալիս ձեռնարկել գիտական ծանրակշիռ հետազոտությունների։ Ինստիտուտն արդեն ձեռնամուխ է եղել հայ պատմագրության պատմությունը ստեղծելու, դժվարություններ հարուցող, սակայն խիստ անհրաժեշտ գործին։

Զգալի հաջողություններ է ձեռք բերվել պատմական աշխարհագրության ու քարտեզագրության ասպարեզում։ Ս. Երեմյանը կարևոր ներդրում է արել Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրության մասնագիտական ուսումնասիրության մեջ։

Այս ամենին զուգընթաց ինստիտուտը նախապատրաստել է նաև հայկական այլ կարգի աղբյուրների ուսումնասիրման ու հրատարակման գործը, աղբյուրներ, որոնք, փաստորեն, դուրս էին մնացել սովետահայ աղբյուրագիտության հետաքրքրությունների շրջանակներից։ Դրանք միջնադարյան հայկական ձեռագրերում պահպանված նյութերն են։ 1950-ական թվականների ընթացքում հրատարակվեցին Լ. Խաչիկյանի կազմած XIV—XV դարերի ձեռագրերի հիշատակարանների եռհատորը և Վ. Հակոբյանի՝ XIII—XVIII դարերի մանր ժամանակագրությունների երկհատորյակը։ Հիշատակարանները և ժամանակագրությունները արժեքավոր վկայություններ են պարունակում ժամանակակից իրադարձությունների վերաբերյալ և մեծապես նպաստում Հայաստանի, մասնավորապես XIV—XVI դարերի սկզբնաղբյուր և քիչ ուսումնասիրված շրջանի, պատմության մշակմանը։

Միջնադարյան Հայաստանի իրավա-քաղաքական ու սոցիալական պատմության ուշագրավ նյութեր են պարունակում հայ եկեղեցական կանոնները, որի գիտական բնագրերը մեր պատմագրության մեջ առաջին անգամ հրատարակվեց միայն վերջերս՝ «Կանոնագիրք Հայոց» վերտառությամբ (կազմող Վ. Հակոբյան)։

Աղբյուրագիտական յուր նշանակությամբ խոշոր ներդրում է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» աշխատությունը, որը տեղեկատուի

բնույթով ներկայացնում է հայ ժողովրդի դարերի ընթացքում ստեղծած դրական ժառանգությունը։

Ինստիտուտը ձեռնարկել է նաև աղբյուրների մեկ այլ խմբի՝ հին և միջնադարյան Հայաստանի մասին արժեքավոր վկայություններ պարունակող օտար հեղինակների բնագրերի հրատարակությունը։ Մինչ այժմ «Օտար աղբյուրները Հայաստանի մասին» ընդհանուր սերիայով հրատարակվել են կամ հրատարակության են պատրաստվել լատինական, հունական, արաբական աղբյուրները։

Նշանակալից գործ է կատարվել ռուս և հայ ժողովուրդների պատմական կապերին և փոխհարաբերություններին վերաբերող աղբյուրների և նյութերի հրատարակման ուղղությամբ։

Լույս են տեսել հայ-ռուսական հարաբերությունների XVII դարի և XVIII դարի առաջին երեսնամյակին նվիրված ժողովածուները։ Հրատարակման պրոցեսում է «Հայաստանի միացումը Ռուսաստանին» վավերագրերի առաջին հատորը։ Վ. Ռշտունին երկու գրքով հրատարակել է Հայաստանի զյուղացիական շարժումների և ագրարային հարաբերությունների փաստաթղթերի ժողովածուները, որոնք ընդգրկում են XIX դարը և XX դարի մինչև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանը։

Ետպատերազմյան շրջանում խիստ հասունացել էր հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրելու անհրաժեշտությունը։ Հրատապ էր դարձել մասնավորապես միջնակարգ դպրոցների համար դասագիրք ստեղծելու հարցը։ Հանրապետության վերադաս մարմինների և ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ պատմության ինստիտուտին հանձնարարվեց այդ խնդրի իրագործումը։ Ինստիտուտի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, շուտով ստեղծվեց և 1951—1958 թթ. հրատարակվեց միջնակարգ դպրոցների եռհատոր ձեռնարկը։

Ձեռնարկի առաջին մասն ընդգրկում է հնագույն շրջանից մինչև XVIII դարի վերջերը (խմբագիրներ՝ Բ. Առաքելյան, Ա. Ռ. Հովհաննիսյան), երկրորդ մասը բովանդակում է XIX դարը և XX դարի առաջին երկու տասնամյակները (խմբագիրներ՝ Մ. Ներսիսյան, Վ. Պարսամյան), իսկ երրորդ մասը նվիրված է Հայկական ՍՍՀ-ի մինչև 1956 թվականի պատմությանը (խմբագիրներ՝ Ա. Հակոբյան, Ա. Մնացականյան)։ Ճիշտ է, դասագիրքը որոշ չափով սխեմատիկ բնույթ է կրում, սակայն այն մարքս-լենինյան մեթոդոլոգիայով հայ ժողովրդի պատմության առաջին շարադրանքն էր։ Անշուշտ, նրա ստեղծումը պատմության ինստիտուտի համար առաջընթաց քայլ էր։

Սովետահայ պատմագրության ձեռք բերած հաջողությունները հնարավորություն էին ընձեռում ու անհրաժեշտ դարձնում ընդհանրացնող և ծավալուն ու գիտականորեն խոր, կոլեկտիվ աշխատության ստեղծելը։

Պատմության ինստիտուտը, դրսի կարող ուժերի մասնակցությամբ, 1960 թվականին ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի, հնագույն շրջանից մինչև մեր օրերն ընդգրկող, պատմության ութհատորյակի (գլխ. խմբագիր Ա. Գ. Հովհաննիսյան) ստեղծման աշխատանքներին։ Չնայած մեր ժողովրդի պատմության ուսումնասիրությունը հարուստ անցյալ ունի, սակայն գիտական-ակադեմիական այդպիսի ծանրակշիռ աշխատություն առաջին անգամ է ստեղծվում։ Արդեն տպագրվել է 1917—1940 թթ. ժամանակաշրջանն ընդգրկող 7-րդ հատորը։ Հիմնականում ավարտվել է նաև մյուս հատորների շարադրանքը,

որոնք խմբագրվում ու հրատարակության են պատրաստվում։ Առաջիկա մի քանի տարիների ընթացքում լիովին կավարտվի ութհատորյակի հրատարակումը։

Այսպիսով, անցած քառորդ դարում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը նշանակալից հաջողությունների է հասել և իր կոչման համապատասխան առաջատար դեր է կատարել և ուղղություն տվել հանրապետության պատմագիտական մտքին։